

ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի  
գեկույցը՝ 2013թ. ՏԿՆ գործունեության մասին

Մեծարգո պարոն Նախագահ,  
Հարգելի գործընկերներ,

Թույլ տվեք կատարված աշխատանքները ներկայացնել երկու հիմնական ուղղություններով՝

*Տարածքային կառավարման մասով.*

- Մշակվել են մարզերի քառամյա զարգացման ծրագրերի, դրանց հիման վրա՝ տարեկան աշխատանքային ծրագրերի կառուցվածքի, ծրագրերի իրականացման մոնիթորինգի համակարգի վերաբերյալ իրավական փաստաթղթերը: Այս տարի 5 մարզ կունենա արդեն երկրորդ քառամյա զարգացման ծրագիրը: Մարզպետարանների աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ունիֆիկացվել են նրանց կառուցվածքները, դրանք համալրվել են անհրաժեշտ տեխնիկական գույքով, ամբողջությամբ ներառված են պետական կառավարման համակարգում շահագործվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունում:
- Մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ գործակցությունն ապահովող կարևոր կառույցի՝ մարզային խորհուրդի դերակատարումը բարձրացնելու, մասնավորապես՝ մարզային զարգացման պլանավորման, պետական ծրագրերի մշակմանն արդյունավետ մասնակցություն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ Նախագահին է ներկայացվել համապատասխան հրամանագրի նախագիծ, որն արդեն ստորագրվել է:
- Մարզպետների՝ վարչական հսկողության գործառույթը հստակեցնելու, վարչական վերահսկողության բովանդակությունն ու մեխանիզմները ունիֆիկացնելու նպատակով մշակվել և ՀՀ Նախագահին է ներկայացվել համապատասխան հրամանագրի նախագիծ, որը նույնպես արդեն ստորագրվել է:
- Արդեն չորրորդ տարին կիրառվում է մարզպետների աշխատանքների գնահատման համակարգ:
- Մարզերը ընդգրկվում են միջազգային համագործակցության տարբեր ձևաչափերում, մասնավորապես, ՌԴ սուբյեկտների, Ֆրանսիայի և այլ երկրների տարածքային միավորների, Եվրոպական ռեգիոնների ասամբլեայի հետ: Այս համագործակցության շրջանակում ծրագրերը հումանիտար մշակութայինից բացի դառնում են զարգացմանը միտված ու ներդրումային:


*Տեղական ինքնակառավարման մասով.*

- Համայնքային բյուջետային կարգապահության և սեփական եկամուտների կատարողականի ցուցանիշների բարձրացման խնդիրները նախարարության կարևորագույն գործառույթներից են: Խնդրի լուծման նպատակով կատարվել է օրենսդրական աշխատանք, ընդունվել է տեղական հարկերի սահմանման ու

հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված օրենսդրական փաթեթը, մշակվել և կիրարկման են դրվել անհրաժեշտ մեթոդական փաստաթղթեր: Ձեռնարկված շարունակական միջոցառումների արդյունքում, արդեն 2008թ.-ից համայնքների բյուջեների սեփական եկամուտները շարունակաբար աճել են:


**Պատկեր 1** Համայնքների բյուջեների 2007-2013թթ. փաստացի ընդամենը եկամուտներ (2013 թ. տվյալները պլանային են):

Ընդհանուր առմամբ, համայնքների բյուջեների 2012թ. ընդամենը եկամուտները 2007թ. համեմատությամբ աճել են 136.2%-ով կամ 55,020,499 հազ. դրամով:




**Պատկեր 2** Համայնքների բյուջեների 2007-2013թթ. փաստացի սեփական եկամուտներ, այդ թվում հարկային (2013 թ. տվյալները պլանային են):

Սեփական եկամուտների աճը կազմել է 11,529,528 հազ. դրամ կամ 68.3%, այսինքն սեփական եկամուտները աճել են մոտ 1.7 անգամ:



**Պատկեր 3** Համայնքների բյուջեների 2007, 2012, 2013թթ. Ընդամենը եկամուտներ, սեփական եկամուտներ, դոտացիաներ: <i>Հողի հարկի ցուցանիշը 2007թ. համեմատության աճել է 912,961 հազ. դրամով (27.7%), գույքահարկինը՝ 4,622,776 հազ. դրամով (61.9%), տեղական փոփոխությունները՝ 1,779,038 հազ. դրամով (143.2%), գույքի վարձակալությունից եկամուտները՝ 1,132,102 հազ. դրամով (58.9%):



**Պատկեր 4** Աշխատավարձերի պարտքերի մարում: <i>1996 թվականից տեղ ական հարկերի գծով, ամենափոքրը պատճառներով, առաջացել են զգալի ապառքներ, համապատասխանաբար հաշվեգրվել են նաև փոյժեր ու փուլանքեր: Արդյունքում ձևավորվել են որոշակի պարտքեր, հարկապես մտահոգիչ էին նախորդ փուլերին աշխատավարձի գծով ձևավորված պարտքերի ծավալները: 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ աշխատավարձի պարտքերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ: 2013թ. օգոստոսի 15-ի

դրությամբ աշխատավարձերի պարտքի ընթացիկ մնացորդը կազմել է մոտ 45,2 մլն.դրամ, իսկ ընդհանուր պարտքը՝ 93,5 մլն դրամ:

Տեղեկատվություն  
ԱՇԽԱՏԱՎԱՐՉԻ ԳԵՐՎ ՊԼՈՒՏԵՐԻ ՄԱՐԱՆ ԿԵՐԱԲԵՐՑԱԼ  
15.10.2013թ. դրությամբ

հազար դրամ

| հ/հ | Մարզի անվանումը | Նախորդ տարիների ընթացքում կուտակված պարտքը | Պարտքի մարումը մինչև 01.01.13թ. դրությամբ | Ընդամենը նախորդ տարիների պարտքի մնացորդը 01.01.13թ. դրությամբ | 2012թ. արտոնող տարիների պարտքը 01.01.13թ. դրությամբ | Ընդամենը նախորդ տարիների պարտքը 01.01.13թ. դրությամբ | Պարտքի մարումը 01.10.13թ. դրությամբ | Ընդամենը նախորդ տարիների պարտքի մնացորդը 01.09.13թ. դրությամբ | 2013թ. հաշվառվածին և սոց. վճար 01.10.13թ. դրությամբ | 2013թ. պարտքը 15.09.13թ. դրությամբ | 2013թ. պարտքը 01.10.13թ. դրությամբ | 2013թ. պարտքը 15.10.13թ. դրությամբ | Ընդամենը պարտքը 15.10.13թ. դրությամբ |
|-----|-----------------|--|---|---|---|--|-------------------------------------|---|---|------------------------------------|------------------------------------|------------------------------------|--------------------------------------|
| 1   | Արագածոտն       | 454,776                                    | 447,028                                   | 7,748   | 0   | 7,748  | 4,689.0                             | 3,059   | 1,438,706   | 0                                  | 0                                  | 0                                  | 3,059                                |
| 2   | Արարատ          | 9,926                                      | 9,926                                     | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 1,829,466   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 3   | Արմավիր*        | 348,474                                    | 344,261                                   | 4,213   | 0   | 4,213  | 3,910                               | 303   | 1,961,544   | 8,036                              | 20,971                             | 11,520                             | 11,823                               |
| 4   | Գեղարքունիք     | 590,217                                    | 530,063                                   | 60,154  | 0   | 60,154   | 15,224                              | 44,930  | 1,636,644   | 38,632                             | 33,690                             | 33,690                             | 78,620                               |
| 5   | Լոռի            | 100,126                                    | 100,126                                   | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 2,178,250   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 6   | Կոտայք          | 72,517                                     | 72,517                                    | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 2,229,238   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 7   | Շիրակ           | 490,317                                    | 462,434                                   | 27,883  | 4,733   | 32,616   | 32,616                              | 0   | 2,389,766   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 8   | Սյունիք         | 126,214                                    | 126,214                                   | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 1,679,698   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 9   | Վայոց ձոր       | 115,277                                    | 115,277                                   | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 528,163   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
| 10  | Տավուշ          | 22,202                                     | 22,202                                    | 0   | 0   | 0  | 0                                   | 0   | 1,223,601   | 0                                  | 0                                  | 0                                  | 0                                    |
|     | Ընդամենը        | 2,330,046                                  | 2,230,048                                 | 99,998  | 4,733   | 104,731  | 56,439                              | 48,292  | 17,095,077  | 46,668                             | 54,661                             | 45,210                             | 93,502                               |

- Առանձնահատուկ աշխատանք է տարվում ապառքների ուղղությամբ: Մի կողմից 2006 թվականից համայնքներին փոխանցված ոչ լիարժեք բազաները, մյուս կողմից դատական մարմինների կողմից կիրառվող հայցային վաղեմությունն անհաղթահարելի խոչընդոտ էին տեղերում հարկային արդյունավետ վարչարարության համար: Արդյունքում 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի ու գույքահարկի մասով կուտակված ապառքները տույժ տուգանքների հետ միասին կազմել են 31.1 մլրդ դրամ: Խնդրի լուծմանն էին ուղղված 2009 և 2010 թվականներին հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին օրենքները: Համայնքային բյուջեներ կանխիկ մուտքագրվեց շուրջ 2,8 մլրդ դրամ, արտոնվեցին այդ գումարների համար հաշվարկված 2,1 մլրդ դրամ տույժեր ու տուգանքներ: Այդ օրենքների ընձեռնված հնարավորությունից օգտվել են 129891 քաղաքացիներ:
- Մակայն այդ միջոցառումները վերջնականապես չլուծեցին հողի հարկի բազաներում կուտակված ապառքների մարման ու բազաների լիարժեքության ապահովման խնդիրը: 2012 թվականին ընդունված օրենքով զրոյացվեցին մինչև 2008 թվականի հունվարի 1 -ը հաշվարկային բազաներում հաշվառված հողի հարկի ու գույքահարկի ապառքները (մոտ 31 մլրդ դրամ) և հայցային վաղեմության ժամկետը դարձվեց 10 տարի:
- Մշակվել և արդեն կառավարություն են ներկայացվել օրենսդրական նախաձեռնություններ և մեթոդական փաստաթղթեր, որոնք կմիասնականացնեն համայնքների զարգացման քառամյա ծրագրերի կառուցվածքն ու մեթոդական հիմքը և կապահովեն վերջինների ու մարզային զարգացման ծրագրերի ներդաշնակեցումը:

- Բնակչության մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների ընդունմանն ապահովելու նպատակով մշակվել և արդեն ընդունվել է համապատասխան օրենսդրական փաթեթ, այժմ աշխատանքներ ենք տանում օրենքով նախատեսված հնարավորությունների մասին բնակչությանը իրազեկելու և այդ դրույթները իրագործելու ուղղությամբ:
- Նախարարությունը՝ ՀՀ ֆինանսների նախարարության և Կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ մշակել է «Անշարժ գույքի հարկի մասին» օրենքի նախագիծը և գնահատել է այս հարկի հաշվարկման տարբեր սցենարներ:
- Շարունակական աշխատանքներ են տարվում Համայնքային ծառայության համակարգի ներդրման ու դրա կատարելագործման ուղղությամբ, իրականացվում են ուսուցողական և հատկապես, օրենքով նախատեսված վերապատրաստման գործընթացներ, էականորեն կրճատվել է համայնքների աշխատակազմերում կադրերի հոսունությունը:
- Վարչատարածքային բարեփոխումների մասով, ինչպես նշեց նախարարը, Ձեզ մանրամասն ներկայացնելու մի քանի առիթ ունեցել ենք, հատկապես Ջերմուկում: Ձեր հանձնարարականները հետագա ընթացքի վերաբերյալ արդեն իսկ սկսել ենք իրագործել, մասնավորապես, աշխատում ենք մշակել քայլերի մի ծրագիր, որով հնարավոր է համոզել և վստահեցնել բնակիչներին այդ փոփոխությունների դրական արդյունքների մասին, այլ խոսքով՝ ապահովել նրանց դրական վերաբերմունքն այդ փոփոխությունների նկատմամբ: Ծրագիրը պատրաստ լինելուն պես կներկայացվի քննարկման՝ սահմանված կարգով:
- Տարեցտարի պետական բյուջեի, համայնքային բյուջեների, միջազգային և այլ աղբյուրներից օժանդակությունների միջոցներով բարեկարգվում են տեղական ինքնակառավարման մարմինների շենքային պայմանները, տեխնիկական հագեցվածությունը, ժամանակակից էլեկտրոնային համակարգերին ինտեգրումը:
- Նախարարությունը ներկայացնում էմ մի շարք միջգերատեսչական հանձնաժողովներում, որոնցից երկուսը՝ Հողերի կատեգորիաների փոփոխման և Այլընտրանքային ծառայության հանձնաժողովները, ղեկավարում էմ: Առաջինի պարագայում մենք համակարգում ենք մի շարք նախարարություններից կարծիքների ստացումը և տրամադրում ենք եզրակացություն, իսկ երկրորդ հանձնաժողովի առաջին նիստն ենք անցկացրել ու կայացրել ենք որոշումներ 59 դիմողների վերաբերյալ:

Պարոն Նախագահ, մշտական է մեր համագործակցությունը Եվրոպայի խորհրդի, Եվրամիության համապատասխան կառույցների հետ: ԵՄ ի հետ ունենք շարունակական և գործնական աշխատանք, մասնավորապես մեր օրենսդրական բոլոր նախաձեռնություններին ցուցաբերվում է մասնագիտական օժանդակություն և իրավական փորձաքննություն: ԵՄ հետ ընթացքում ունենք երկու ծրագրեր, որից մեկը՝ ռեգիոնալ բնույթի: Այս ծրագրերի արդյունքում արդեն 2014 թվականի վերջից կարող ենք Արևելյան գործընկերության շրջանակում ակնկալել տարածքային համաչափ զարգացմանն ուղղված շուրջ 7 մլն եվրո ներդրումային դրամաշնորհային ծրագիր, և նաև ներդրումային ծրագրեր Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում, ռեգիոնալ ծրագրի շրջանակներում:

Տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման նկատմամբ լուրջ հետաքրքրություն ունեն մեր երկրում ներկայացված գրեթե բոլոր միջազգային

կազմակերպությունները, նախարարությունը գործնական շփումների մեջ է նրանց հետ, և ունենք համայնքների հետ վերջիններիս համագործակցության մեծ փաթեթ:

Պարոն Նախագահ, սրանք հիմնական ուղղություններն են, սակայն նախարարության ստորաբաժանումները իրականացնում են մեր կանոնադրությամբ և գործունեության ծրագրով նախատեսված նաև այլ աշխատանքներ:

**Թույլ տվեք շեշտադրել առաջիկա մի քանի հիմնական խնդիրներ.**

- Վարչատարածքային փոփոխությունների իրականացման ուղղությամբ աշխատանքների շարունակումը:
- Դատաիրավական բարեփոխումների շրջանակում ավելի պարզ ու գործուն պետք է դարձնել տեղական ինքնակառավարման մարմինների ու դատական համակարգի հարաբերությունները, այն գործերով, որոնք վերաբերվում են ՏԻՄ լիազորություններին և ունեն մասսայական ու բովանդակության առումով ստանդարտ բնույթ (հարկային ապառքներ, գույքի ոչ պատշաճ տիրապետում, դրա փոխանցում համայնքին և այլն): Անհրաժեշտ է պարզեցնել իրավաբանական անձանց գույքի արժեքները համայնքներին տրամադրելու և նրանց տեղեկատվական բազայում ընդգրկելու գործընթացը:
- Համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների մասին ունենք մշակված օրենքի նախագիծ, ներդրման հետ կապված որոշակի խնդիրներ կան, առաջիկայում պետք է գտնենք լուծումներ: *Խոսքը առավել ունակ համայնքներից միջոցների վերաբաշխումն է կարիքավոր համայնքներին, բայց չսահմանափակելով համայնքների արդեն իսկ իրականացվող լիազորությունների ծավալները:*
- Աշխատում ենք Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ նոր օրենքի նախագծի վրա, 2002 թվականից տեղի են ունեցել իրավական ու բովանդակային խորքային փոփոխություններ և անհրաժեշտություն է նոր օրենքի նախագծի մշակումը: Նախապատրաստում ենք նաև առաջարկություններ ներկայացնել Սահմանադրական փոփոխություններ նախապատրաստող հանձնաժողովին:
- Հաջորդ տարի խնդիրներ կան կապված տեղական ինքնակառավարման համակարգում աշխատավարձերի քաղաքականության հետ: Պետք է ապահովենք համայնքային մակարդակում աշխատավարձերի բարձրացման քաղաքականության իրականացում, և բացառենք պարտքերի կուտակման ռիսկը: Այդ նպատակով անհրաժեշտ է որոշակիորեն միասնականացնել համայնքային մակարդակում աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմերի, համայնքային կազմակերպությունների կառուցվածքը, իհարկե, հաշվի առնելով նաև նրանց առանձնահատկությունները:

Շնորհակալություն: